


*

Յաջորդ օրը երկու զինուորներ շրջան
կ'ընէին ցանկապատին մէջ՝ կանգ առնե-
լով ամէն մէկ ինկածներուն մօտ, և ա-
նոնց ցանկը կը շինէին։ «Պառակի պա-
հակավայրին» հասնելով՝ ծոեցան հոն
պարզուած դիակի մը վրան. զինուորնե-
րէն մէկը անոր պատմուանին կոճակները
քակեց և կարդաց վերաբկուին ներսի դին
նշանակուած անունը.

«Դիմիտրի Խվանովիչ Զէրէվիք, չոր-
րորդ զօրագնդէն, հօթանասունումկեհ-
բորդը»։

Միւս զինուորը ցուցակին մէջ գրեց։

Լուսնի Բարսես



Գ Ա Շ Ե Ր

Օ՛ գիշերը անուշիկ է, պաշտելին.
Նա լցուն է երազներով ծիրանի

Ա՛յ միշտ գիշեր լինէ՛ր կեանքըս յաւիտեան,
Գիշեր աստղնա, գիշեր լուսնակ շողողնան.
Լիներ, ձորու գիլուած լուսնից անման,
Եւ գետափներ և առուակներ օրորուն։

Լուս գիշերին ես ենէի երգելով
Առուակների դալար-ափին նստէին.
Վազուկ ջրեր անոյ օօրը երգելով,
Նախանց երգով երագիկ, քնէի՞

Օ՛ գիշերը նոգուս հանգիստ է բերում,
Աստղեր բերում, լուսնակ բերում լուսահեր.
Օ՛ գիշերը ինծի երազ է բերում
Գիրոց վարդերից, շոշաններից երազներ . . .

Օ՛ միշտ գիշեր լինէ՛ր, գիշեր պաշտելին,
Նա լցուն է երազներով նեշուալի

Օ՛ ՄԻՇ ԿԱՐԾԱԿ

Երը կը կարդաք իմ երգելը արցունքուտ,
Օ՛ մի կարծէք թէ իմ սիրուտ ախյոյս է.
Ես մերթ ընդ մերթ լաց եմ լինում տրտմագին.
Բայց իմ սիրուտ, իմ վարդ կեանքը յուսով է։

Այս, շատ վաղ սկսեցի տառապել,
Դեռ շատ կանուի արցունք իկան իմ աչքից,
Բայց մի՛ կարծէք որ իմ ոսկի վառ յոյսոր
Ել հնացան, էլ գընացին իմ կեանքից։

Զէ որ տարին ունէ ձմեռ ու գարուն,
Զէ որ ամէն օրերն զուարթ չեն տարուան.
Ճիշտ նրա պէս ձմեռը կայ իմ հոգուն,
Եւ կան նաև զարնան օրեր աննման։

Էլ մի կարծէք թէ իմ կեանքը անյոյս է,
Թէ ես միայն արցունք կ'երգեմ և սուզեր.
Տարուան նման սիրուտ ձմեռ էլ ունէ,
Ունէ նաև զարնան ծաղկուտ վարդ օրեր։ . . .

Յ Ա Ց Ս Ե Ր

Ա՛յ կ'ուզեմ որ շատ շուտ ծագեն իմ յոյսեր . . .

Առաւօտուն արծաթ ցողը վարդերի
կաթիլ կաթիլ հոգուս մէջը կաթում է.
Առաւօտուն անոյ մեղմիկ սիւժերի
թուրումներից սիրուտ այրուում վառուում է։

Առաւօտուն, օ՛ արշալոյս ծիրանի,
Հեշտակներով հոգիս քեզի կը գրկէ.
Համբոյրներէդ, ով արշալոյս, կը պաղի
Սիրուտ մանուկ խոցուած կրակ ցաւերէ։

Առաւօտուն արծաթ ցողը աշերիս
կաթիլ կաթիլ այսերէն վար կը կաթի.
Համբոյր կ'ուզեմ, համբոյրներու յոյսերիս,
Սիրուտ կ'այրի՛, սիրուտ կ'այրի՛, ալի, կ'այրի՛։

Ա՛յ կ'ուզեմ որ շատ շուտ ծագեն իմ յոյսեր . . .

Ա Ե Ն Ա Ն Ե Բ Գ Ե Ր Ի Բ Յ

Աշուն, աշուն, նորից եկար,
Ծաներ, պարտէգը մերկացան.
Աշուն, աշուն, ինչո՞ւն եկար.
Ոսկի տերներ թափեցան։

Աշուն, աշուն, թեզ չեմ սիրում.
Սըրտիս ցաւեր դուն բերիր.
Վարդ յոյսերու ծաղիկ զարուն
ինչո՞ւ սըրտէս թափեցիր։

Տերների ալ նըմանակ
Մէկիկ մէկիկ թափեցան
Ցոյսերը իմ վարդ անուշակ,
Սըրտում ցաւեր լցցուեցան։

Աշուն, աշուն, նորից եկար,
Ծաներ, պարտէգը մերկացրիր.
Դարդու աշուն, ինչո՞ւն համար
Սըրտէս յոյսեր թափեցիր . . .

ԶՄՐԱՆ ԵՐԳՎԵՐԻՑ

Գացին սոխակներ, և ան նըրանց հետ
Թրուն իմ յոյսեր, իմ ոսկի յոյսեր.
Եկաւ ճըմեռը, և ան նորա հետ
Լացին իմ աշեր, իմ այրուած աշեր:

Զայն ծըպտում չըկայ սառ ճամպաներում.
Քամին սովում է սարի վերկից.
Վազուկ ջըրերը էլ յեն վրգվում.
Անտառն է զըրկուել նախուն հաւքերից:

Երկնքում աստղեր էլ չեն երեսում,
Զէ փայլում լուսնակ, չէ երգում սոխակ.
Եւ անտառներում և այգիներում
Զիւնը թափուամ է կաթի պէս ներմակ:

Սիրտարս այրուած, աշերս թըրջըրած
Երկինք եմ նայում տըխուր ակնարկով.
Ախ անոյշ գարուն, էլ ծաղիկ գարուն,
Դու ե՞րբ պիտի զաս անոյշ ծաղկունքով . . .

ԼՈՒՍՆԱԿ ԶԱՆ

Ան չե՞ս տեսած, լուսնակ ջան,
Ի՞նչպէս աւերդարձըրին
Մեր երկիրը Հայաստան,
Էն աննըման մեր Անին:

Լացիր Եարաք դուն երկնից,
Տըրիեց դէմքըր, լուսնակ ջան.
Այժմ է գուն երկնքից
Տեսնում ես հայ Կիլիկեան:

Նայիր լուսնակ, միշտ նայիր,
Գուցէ դու էլ արտասուես.
Լուսնակ այսաեղ դու նայիր,
Գուցէ դու էլ լաց Անիս . . .

Ան էլ պէտք չես, լուսնակ ջան,
Էլ յօյս չըկայ մեր սըրտում.
Աւերակ է Կիլիկիան,
Էլ կեակը չըկայ նրանում:

Նայիր լուսնակ իմ սըրտին,
Դու էլ զընա այս տեղից.
Ինձ մի համբոյր տուր վերջին
Էլ մի՛ փայլիր հայ երկինց:

Ա Բ Ե Խ Ի Ն

Պայծառ, փայլուն, ոսկի արև
Ինչո՞ւ մութ ես ինձ թըւում.
Օսար արև, ոսկի արև
Ի՞նչ կայ ծաղիկ իմ սըրտում . . .

Ի՞նչ է այրուում ջիվան հոգում,
Ի՞նչ կայ այնաեղ, ա՞ի ի՞նչ կայ.
Լիյ ջան արև, էս աշխարհում
Ախ ես ի՞նչքան լաց եղայ:

Ոիրտս այրուած, օտա՞ր արև,
Մութ ես թըւում դու ինծի.
Ին լեռները, էն վարդ ճորեր
Ջըրերը իմ վաթանի . . .

Անոյշ վաթան, ջան հայրենիք
Սիրտս այրուած է, այրուած,
Գու կարօտը վառ անուշիկ
Ծաղիկ սըրտում է վառուած:

Փայլուն, պայծառ, օտա՞ր արև
Մութ ես թըւում դու ինծի.
Հայրենիքին վառ կարօտը
Իմ սըրտումը շամ կ'այրի . . .

ԱՐԱԿԱՆ-ԵՐԿԱՐ



Ա Պ Խ Ա Բ

Դու ջուրերու ազատ ծընունդ,
Հեղուկ գունտին նըկուն իշխան,
Ի՞նչպէս ձըզած հայրենի տունդ,
Կը պասկին հոս, քարին վըրայ:

Ահա արգէն դու հոգեթունդ,
Կը գալարուիս մուխի նման,
Ջուր հասցուցէք, ջուր օգոնութեան,
Պիտի մենին ձուկն անոշնունդ:

Նըժեկն կ'ողբամ, ես ալ, ու կեանք,
Հնոու հողէս և վարդերէս,
Մեր արշալոյսը վարդերէս:

Ո՞հ, մինչև ե՞րբ այս տառապանք.
Հնոու քեզմէ, պիտի մեռնիմ,
Հայրենիք իմ, Հայրենիք իմ:

ԳՅ. ԹէԱԼԱՆԵԱՆ

Ա. Պոյիս
ի 19 դեկտեմբեր 1909